ՔԱՐԻՑ ԾՆՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Հայոց առասպելներ
մեծերի և փոքրերի համար

ՔԱՐԻՑ ԾՆՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

«ԿԱՃԱ» շվեյցարական
մարդասիրական հիմնադրամ

Երևան 2025

ՀՏԴ 398.2(=19)
ԳՄԴ 82.3(5Հ)
Ք 301

Ժողովածուի կազմող՝ Լիլիթ Սիմոնյան
Խմբագիր՝ Աստղիկ Բալայան
Սրբագիր՝ Աննա Չոփուրյան
Նկարիչ՝ Լուսինե Թամազյան
Էջադրող՝ Վահագն Աբրահամյան

Ք 301 Քարից ծնված ժողովուրդը / Կազմ.՝ Լ. Սիմոնյան.- Եր.: «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, 2025.- 48 էջ:

«Քարից ծնված ժողովուրդը» գրքում ներկայացված պատմությունների հեղինակը հայ ժողովուրդն է: Դրանք պատմվել են բանավոր սերնդեսերունդ, հազարամյակներ շարունակ: Գրքի հիմնական նպատակն է ծանոթացնել հայ երեխաներին իրենց արմատների, հայ ժողովրդի հնուց եկած արժեքների, պատկերացումների ու սովորույթների հետ, միով բանիվ՝ հայոց դարավոր ավանդույթի, ավանդական աշխարհայացքի հետ, սովորեցնել նրանց սիրել և արժևորել սեփական մշակույթը, դառնալ ու լինել դրա կրողը, հպարտ լինել սեփական ազգային պատկանելիության համար: Այն նախատեսված է մինչև 12 տարեկան երեխաների համար:

Գիրքի յուրաքանչյուր առասպելում ներկայացված է երկու տարբեր QR կոդ, որոնք նախատեսված են ընթերցողին լրացուցիչ գիտական, ազգագրական և մանկավարժամեթոդական բովանդակություն տրամադրելու համար:

– այս նշանով QR կոդը ներառում է տվյալ առասպելում օգտագործված խորհրդանիշների ու կերպարների մասին պարզաբանող հետաքրքրաշարժ նյութեր՝ հիմնված ազգագրական ու գիտական աղբյուրների վրա: Այստեղ կգտնեք նաև առասպելի համահավաք, առավել մանրամասն տարբերակը:

– այս նշանով QR կոդը նախատեսված է ծնողների, մանկավարժների և դասավանդող մասնագետների համար: Այն ներառում է մանկավարժական մեթոդներ, քննարկման հարցեր, խաղեր, որոշ դեպքերում՝ թեմային համապատասխան երգ-երաժշտություն: Այստեղ ներկայացված նյութը նախատեսված է առասպելները կրթական նպատակով կիրառելու համար:

Խորհուրդ ենք տալիս նախ կարդալ առասպելը, ապա օգտվել համապատասխան QR կոդից:

ՀՏԴ 398.2(=19)
ԳՄԴ 82.3(5Հ)

Այս գրքի հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամին: Իրավունքները ձեռք են բերվել ժողովածուի կազմողի հետ կնքված պայմանագրով:

ISBN 978-9939-1-2106-2
© «ԿԱՋԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, 2025

Սիրելի՛ փոքրիկ բարեկամ,

Հայերն աշխարհում ապրում են շատ վաղուց, և միշտ էլ փորձել են հասկանալ, թե ո՞վ ենք մենք, որտեղից ենք սկիզբ առել, ինչպե՞ս է կառուցված հայոց աշխարհը, որտեղի՞ց են այն գեղեցիկ և օգտակար բաները, որ շրջապատում են մեզ: Երբեմն մարդիկ ապրել են հենց բնության հետ՝ քարայրներում, ծառերի տակ, գետերի մոտ: Բնությունը եղել է նրանց տունը, սնունդը: Այդ սնունդը միայն մարմնի համար չէր, այլև հոգու: Բնության գեղեցկությունը, նրա բարիքները գնահատել են մեր նախնիները՝ մեծ տատերն ու պապերը, սովորել են բնությունից և տեսել են բնության կենդանի, շնչավոր լինելը, համարել են, որ այն մտածում է ու զգում, նաև խոսում է յուրովի լեզվով: Եվ նրանք փորձել են հասկանալ այդ լեզուն: Իրենց շրջապատող ամեն բան համարել են հատուկ պատմություն ունեցող, հետաքրքիր դեպքերի հետևանք: Եվ հյուսել են զրույցներ դրանց շուրջը:

Ահա այդ զրույցների մի մասը դու կգտնես այս գրքում: Դրանք հազարավոր տարեկան են, փոխանցվել են բանավոր խոսքով: Հարյուր, երկու հարյուր, հազար տարի առաջ ինչ-որ պապիկ կամ տատիկ, հայրիկ կամ մայրիկ պատմել է դրանք իր փոքրիկին, նա էլ, մեծանալով, իր բալիկներին է փոխանցել: Հայրենասեր, բարի ու գիտակ մարդկանց միջոցով հին ու սիրուն այդ պատմությունները հասել են քեզ:

Դու նույնպես բնության մի մասն ես, ինչպես արևն ու քարը, ծաղիկն ու մեղրը, որոնց մասին պատմություններ կգտնես այստեղ: Դու նաև հայ ժողովրդի մի մասն ես, որին անհրաժեշտ է ճանաչել ու հիշել հնուց եկած այս ավանդությունները: Հույս ունենք, որ մի օր դու էլ կփոխանցես այս գիրքը քեզնից փոքրին և հենց դու էլ կօգնես, որ քեզնից փոքրն իր մեջ պահի հայ լինելը:

Սիրելի՛ ծնող,

Սիրելի՛ մանկավարժ,

Ձեր սեղանին շատ առանձնահատուկ գրքույկ է, որ առաջինն է իր տեսակի և որակի մեջ: Այստեղ հավաքված են հայկական առասպելներ, որոնք կազմել են մեր նախնիների աշխարհայացքի հիմքերը: Սրանց վրա են հիմնված հայերի արժեքներն ու բարոյական պատկերացումները, որոնք հազարամյակներով ձևավորել են հայ մարդու տեսակը:

Թեև այս գիրքը նախատեսված է մինչև 12 տարեկան երեխաների համար, սակայն կարևոր է ավելի բարձր տարիքի հայոց համար, քանի որ դուռ է բացում դեպի հայկական նույնականացման ակունքը: Այստեղ հավաքված են մի քանի սյուժեներ, որոնք բովանդակային կապերի մեջ են գտնվում հայ ժողովրդի ավանդական ամբողջ ժառանգության հետ՝ էպոսների և հեքիաթների, երգերի ու պարերի, աղոթքների ու առած-ասացվածքների, իհարկե, նաև հմտությունների, գիտելիքների, բարոյական սկզբունքների ու գեղագիտական նորմերի հետ:

Ինչպե՞ս օգտվել այս գրքից: Իհարկե, ամենափոքրիկները թերթելու են գիրքը և դիտելու են նկարները: Նրանց համար հարկ կլինի ընթերցել ավանդազրույցները հատվածներով: Ավելի մեծ երեխաներն, անկասկած, հարցեր կունենան լսվածի և նկարների շուրջը: Այդ հարցերին լիարժեք պատասխաններ տալու և հայկական ավանդական պատկերացումների ու խորհրդանիշների վերաբերյալ ավելի խոր գաղափար հաղորդելու համար ձեզ օգնության կհասնեն QR ծածկագրի միջոցով հասանելի ծանոթագրությունները: Յուրաքանչյուր առասպելի համար տրամադրվում է երկու հավելյալ նյութ. առաջինում խորհրդանիշների մեկնություններ, ծանոթագրություններ, գիտականորեն ճշգրիտ աղբյուրներն են, որոնցից քաղված և երեխաների համար մատչելի լեզվով գրքի մեջ են ընդգրկված առասպելները, իսկ երկրորդում՝ հուշումներ են, թե ինչպես կարող եք օգտագործել այս գիրքը՝ երեխաների համար հայկական խորհրդանիշներն ավելի հասկանալի դարձնելու և նրանց բարոյական ու գեղագիտական ուղղորդումները կատարելու համար: Դուք կտեսնեք, որ այս սյուժեները իսկապես բանավոր ավանդույթի կոթողներ են: Շատ օգտակար կլինի ծանոթանալ այդ նյութերին՝ երեխայի համար տվյալ առասպելն ընթերցելիս: Բարձր տարիքի երեխաները, ովքեր արդեն իրենք էլ կարող են կարդալ գիրքը, կարող են նույն ազատությամբ օգտվել հավելյալ նյութերից: Ավելին, դրանք կարող են օգնել նրանց իրենց դպրոցական և արտադպրոցական նախագծերի ստեղծման և իրականացման համար: Հավելյալ նյութերում կգտնեք նաև երգեր, որոնք առնչվում են որոշ առասպելներին:

Յուրաքանչյուր առասպելի ընթերցումից հետո դուք կարող եք քննարկել այս կամ այն դրվագը, սովորեցնելով երեխային մտորել, դատողություններ ունենալ բարոյահոգեբանական կարևոր հարցերի մասին, նաև խարսխելով երեխայի մեջ հայրենասիրության առանցքային արժեքները:

Բարի ընթերցում ու դիտում՝ ձեզ համար էլ նոր, առեղծվածային ու չքնաղ հայ առասպելի աշխարհում: Հուսով ենք, որ այս հրատարակումը կդառնա ձեր և ձեր երեխաների սեղանի սիրելի գիրքը ու տարիներով կծառայի ձեզ:

ԱՐԵՎՆ ՈՒ ԼՈՒՍԻՆԸ

Հին, շատ հին ժամանակներում Արևն ինքը փոքրիկ աղջիկ է եղել: Նրա ավագ եղբայրը՝ Լուսինը, որին մենք գիշերն ենք տեսնում, նույնպես փոքր տղա էր: Արևն ու Լուսինը մայրիկ ունեին, որն ապրում էր Վանա լճի մեջ: Նա ամեն օր հաց էր թխում իր զավակների համար, և երբ նրանք վերադառնում էին տուն, կերակրում էր նրանց, լողացնում և տանում քնելու: Ահա թե ինչու ենք ասում՝ «Արևը մայր մտավ»՝ գնաց իր մոր մոտ:

Մի պատմություն կա այն մասին, թե ինչպես եղբայր Լուսինը և քույր Արևը վիճեցին: Նրանք չէին կարողանում որոշել, թե նրանցից ով է լուսավորելու ցերեկով, իսկ ով՝ գիշերով:

Լուսինը՝ որպես երեխաներից մեծը, որոշեց, որ ինքն է ցերեկով դուրս գալու, իսկ Արևը թող գիշերով շրջի: Արևը լաց եղավ ու ասաց, որ ինքը վախենում է գիշերով ելնել: Մայրիկն այդ պահին հացի խմոր էր հունցում: Նա լսեց երեխաների խոսակցությունը և զայրացավ Լուսնի վրա: Խմորոտ ձեռքով ապտակեց որդուն և ասաց.

– Արևն աղջիկ է և քեզնից փոքր. թող նա ցերեկով շրջի, իսկ դու անվախ տղա ես և արդեն մեծ ես, քեզ համար դժվար չէ լուսավորել մութ գիշերը:

Այդպես էլ որոշեցին: Բայց Արևն էլի դժգոհեց.

– Բայց եթե ես ցերեկը դուրս գամ, բոլոր մարդիկ կնայեն ինձ, ու ես կամաչեմ:

Լուսին եղբայրը ժպտաց, մոտ եկավ և քրոջը տվեց մի բուռ ասեղ՝ ասելով.

– Ա՛ռ այս ասեղները և դրանցով ծակի՛ր այն մարդկանց աչքերը, որոնք երկար կնայեն ու կամաչեցնեն քեզ:

Ահա թե ինչու ոչ ոք չի կարող երկար նայել Արևին, թե չէ՝ աչքերը կցավեն այնպես, ասես դրանց մեջ ասեղներ են խրում: Իսկ Լուսինն այդ օրվանից սկսեց երկնքով շրջել և լուսավորել գիշերը: Մայրական ապտակից նրա դեմքի վրա այդպես էլ մնացել է խմորը: Նրա ուղեկիցներն են բազմաթիվ աստղերը՝ նրա ընկերները:

Մի անգամ, երբ Լուսինն ու Արևը դեռ փոքր էին, մայրը նրանց տալիս է ջրի տիկեր և ուղարկում է նրանց ջուր բերելու ու խոստանում՝ օրհնել նրան, ով շուտ կհասցնի ջուրը: Լուսինը շուտ է հասնում ու տիկը դնում ջրի տակ: Արևը, երբ հասնում է, չարաճճիություն է անում և ծակում Լուսնի տիկը: Ինքն էլ ջուր է լցնում ու տանում, իսկ Լուսնի տարած ջուրը ճանապարհին հոսում է ծակ տիկից: Ահա թե ինչու Լուսնի տիկը մեծանում ու փոքրանում է, որովհետև այն ծակ է:

Լուսինն ու Արևը մեծացան: Նրանք վաղուց արդեն չեն վիճում, այլ խաղաղ, մեկը մյուսին փոխարինելով՝ ծագում են իրենց ժամին և իրենց գործն ավարտելով՝ մայր են մտնում: Արևի արթնանալուց և ծագելուց առաջ Վանա ծովում լվացվելու պահին լեռան տակից դուրս են գալիս նրա տասներկու սևամորթ սպասավորները: Նրանք ունեն լուսեղեն ճիպոտներ, որոնցով խփում են սարերին: Այդ պահին սարերը ցածրանում են, խոնարհվում բնության մոր առջև, իսկ երկնքում հնչում են զանգակներ, որոնց ձայնը մարդկանց համար լսելի չէ: Այդ ձայնը լսում են միայն աքաղաղները, որոնք իրենց ուրախ ծուղրուղուով դիմավորում են լուսաբացը:

ԱՍՏՂԻԿ

Մի օր Արևն իր բարձունքից նայելով՝ մի գեղեցիկ սար տեսավ: Մշո Տիրին-կատար լեռն էր, որ այն ժամանակ երիտասարդ ու հզոր տղամարդ էր: Արևը սիրեց նրան և այդ անգամ մայր մտնելու փոխարեն իջավ այդ սարի վրա: Տիրինկատարն ու Արևը ամուսնացան և զավակներ ունեցան: Նրանց ավագ դուստրը Ծիածանն է, որին ուրիշ անունով ասում են Տիրկան գոտի, երևի իր հոր՝ Տիրինկատարի անունով: Հետո մայր Արևը փոքրիկ աղջիկ ունեցավ, որի անունը դրեցին Աստղիկ:



Ամեն առավոտ երկնքի զանգակները ձայնում էին, դրանց ձայնը լսող աքաղաղները՝ կանչում, և Արևը ելնում էր երկինք՝ իր դժվար, բայց կարևոր աշխատանքը կատարելու, մեզ բոլորիս լույս տալու: Իսկ փոքրիկ Աստղիկը մնում էր հոր մոտ, խաղում բարձունքի ձյան հետ, հավաքում լանջերի ծաղիկները և օրեցօր մեծանում: Երեկոյան՝ մայր մտնելուց առաջ, Արև մայրիկը գալիս էր կարմիր-դեղին գույներով ներկում Տիրինկատարի գագաթը և խաղում իր դստրիկի հետ:

Աստղիկը մեծացավ ու դարձավ աշխարհի ամենագեղեցիկ աղջիկը: Առավոտյան սկսեց ինքն էլ երկինք բարձրանալ՝ մայր Արևից մի քիչ առաջ, իսկ երեկոյան ելնում էր Արևի մայրամուտից առաջ՝ նրան տեսնելու ու մարդկանց նշան տալու, որ շուտով իր և բոլորի քեռի Լուսինն է ծագելու: Հայր Տիրինկատարը միշտ հսկում էր իր աղջկան, որ ոչ ոք չփորձի նեղացնել նրան:

Աստղիկը վարդագույն շղարշ ուներ, որով երբեմն պատում էր իր մարմինը. ահա թե ինչու երկնքում նա երբեմն վարդագույն էր երևում: Նա սիրում էր Գուռգուռա գետում լողանալ: Շատ ամաչկոտ էր և երբ գնում էր լողալու, Մշո դաշտի վրա խիտ մառախուղ, մշուշ էր իջեցնում:

Դա այնքան վաղուց էր, որ Մշո դաշտի տեղում ծով էր ծփում: Ծովի մի ափին Տիրինկատարը բերդ էր կառուցել դստրիկի համար և անունը դրել Աստղնաբերդ: Աստղիկն ամեն մայրամուտի գնում էր այդ բերդը և ճրագ էր վառում: Մշո դաշտ-ծովի մյուս ափին իր բերդն էր կառուցել Դաղոնաց լեռների վիշապ-թագավորը: Նրա որդին ամեն երեկո բերդի վրայից նայում էր Աստղիկին: Սիրահարվել էր Աստղիկին: Ասում են՝ մի անգամ Դաղոնաց արքայազնը փորձել է առևանգել Աստղիկին: Երբ աղջիկը վառել է իր ճրագը, արքայազնը նավակով դուրս է եկել ծով և քշել նավակը դեպի Աստղնաբերդ: Բայց Աստղիկը զայրացած՝ հանգցրել է ճրագը: Լուսինն էլ այդ օրը չի ելել երկինքը լուսավորելու: Աստղիկի բարկությունից ծովն ալեկոծվել է և շուռ տվել Դաղոնաց արքայազնի նավակը: Դժբախտ սիրահարը խեղդվել է ծովի ջրերի մեջ:

Ասում են՝ դրանից հետո Աստղիկը հեռացել է Տիրինկատարի Աստղնաբերդից: Նա իր համար մեկ այլ բերդ է կառուցել Երևանում՝ Հրազդան գետի վրա բարձրացող ժայռի վրա: Բերդը կոչվել է Ծիծեռնակաբերդ, որովհետև դրա վերևի հարկում ապրում էին ծիծեռնակները՝ Աստղիկի սիրելի թռչունները:

Ինչպես սովոր էր, Աստղիկն ամեն առավոտ ժայռից իջնում էր Հրազդան գետը լողանալու: Էլի մշուշով էր պատում գետը, բայց ասում են՝ այս անգամ նրան կարող էին տեսնել այն երիտասարդները, ում նա հավանում էր: Սակայն չկար մեկը, ով տեսել է աշխարհի ամենագեղեցիկ աղջկան՝ վաղորդյան աստղին, Արևի և Տիրինկատարի զավակին:

Նրան տեսնում են միայն երկնքում, որտեղ նա ամեն երեկո իր վարդագույն քողի մեջ փաթաթված՝ դիմավորում է իր ամբողջ օրվա աշխատանքից հոգնած մորը՝ Արևին: Աստղիկն այդպես էլ չսիրեց ոչ մեկին: Նա դարձավ հայ ժողովրդի սիրելի գեղեցկուհի աստվածուհին:

ԱՆՄԱՀ ՀԱՎՔԸ

Ինչպե՞ս է լինում, որ առավոտյան հով է նույնիսկ ամենաշոգ օրերին: Երբ Արևը նոր է դուրս գալիս Վանա լճի ջրերից, ահավոր վառող, բոց ու կրակ է լինում, այնքան այրող, որ կարող է մոխրացնել երկիրը և ամեն կենդանի արարած երկրի վրա: Եվ այդ պահին նրա առաջն է կտրում հզոր Հավքը՝ արծվանման հսկա թռչունը, որն իր թևերը բացում է Արևի առաջ և պաշտպանում աշխարհն այրվելուց: Այդ ժամանակ նրա փետուրները խանձվում, սևանում են Արևի հրեղեն շողերից, բայց նա դիմանում է: Իսկ երբ Արևը բարձրանում է այնքան, որ հասնում է երկնքի կենտրոնին ու միայն լույս ու ջերմություն է տալիս, այլևս չի այրում, Հավքը թռչում է դեպի օվկիանոս, սուզվում ջրի մեջ՝ Արևից ստացած այրվածքները բուժելու:

Նրա վերքերն արագ բուժվում են, փետուրները նորից են աճում, և հաջորդ առավոտյան նա նորից պատրաստ է պաշտպանելու աշխարհը: Այսպես աշխարհի արարումից ի վեր Հավքը ելնում է վաղ առավոտյան, որ աշխարհում հրդեհ չլինի, և բույսերն ու կենդանիները ապրեն, աճեն ու բազմանան: Այդպես է լինելու մինչև աշխարհի վերջը:

Ոչ ոք չգիտի, թե ինչպես է ծնվել այդ Հավքը, ասում են՝ նա եղել է աշխարհի ստեղծումից առաջ և գուցե կապրի նույնիսկ աշխարհի վերջից հետո: Ասում են՝ նա ապրում է հսկայական մի ծառի վրա, որն աճում է ծովի մեջ: Այդ ծառը թաքնված է մարդկային աչքերից, այն տեսել են երազներում, երբ քնի մեջ մարդկային հոգին շրջել է այդ այնհայտ ու ալեկոծ ծովի մեջ անտեսանելի նավով: Այդ երազներում մարդիկ հեռվում տեսել են հսկա ծառը, որի վրա ճրագ-լույս է վառվում: Քանի ծովն ալիքներն իրար ավելի ուժգին է խփում, այնքան ավելի պայծառ է լինում այդ լույսը: Տասներկու ճյուղ ունի այդ ծառը, ամեն ճյուղին՝ երեսուն շիվ, ամեն շիվին՝ երկու ճրագ-լույսիկ, մեկը՝ սպիտակ, մյուսը՝ սև:

Ոչ ոք չի կարող ասել, թե քանի հազար տարեկան է այդ ծառը: Գիտեն միայն, որ Հավքը քառասուն տարի շարունակ իր բույնն է շինում այդ ծառի վրա: Նրա բույնը հսկայական է, գերանով ու կավ-հողով շինած: Հեռավոր երկրներից ու մեծ քաղաքներից է նա բերում շինանյութը՝ հսկա գերաններ, Արաբստանի հող: Մարդիկ երբեմն տեսնում են հեռու-հեռու երկնքում, թե ինչպես է նա իր ահռելի կտուցի մեջ տանում այդ հողն ու գերանները: Այդ պահերին քաղաքների բնակիչները հավաքվում են, հետևում են ահարկու թռչնի թռիչքին ու գիտեն, որ եթե Հավքն իր բույնը չշինի, տիեզերական այդ ծառը կընկնի և աշխարհը կավերի: Երբ բույնը պատրաստ է լինում, Հավքը կանգնում է իր տան տանիքի վրա ու թևերն իրար խփում: Նրա թևերն իրար դիպչելով՝ կրակ են առաջացնում, որից այրվում են ինքն ու իր բույնը: Պատահում է, որ կրակը հասնում է մոտակա քաղաքներին ու մեծ ավերածություններ անում: Հեռավոր վայրերում երևում է այդ կրակը, դրա ցոլքը տեսնում են թե՛ Հայաստանում, թե՛ Ֆրանսիայում:

Բայց Հավքը չի ոչնչանում այդ կրակից, նրան տեսնում են երկնքում՝ մեղրամոմով պատված, թևերի վրա՝ հսկա մի առյուծ: Թե ինչ առյուծ է դա, մարդիկ միայն կարող են կռահել: Ոմանք ասում են, որ դա այն առյուծն է, որի վրա նստած Արևն է անցնում երկնակամարով:

Հինգ հարյուր տարին մեկ Հավքը ծերանում է, նրա փետուրների մի մասը թափվում են, ճաղատանում է: Նրան այդ վիճակում տեսածները «քաչալ չերկեզ» են ասում: Այդ ժամանակ նա թռչում է դեպի երկնքի բարձունքները, հասնում է յոթերորդ երկինք, Արևի շողերի տակ պահում իր մարմինը, որից այն շիկանում է: Դրանից հետո թռչում է ներքև՝ ընկնելով լեռնային սառնորակ լճի մեջ և դրա միջից դուրս է գալիս, թռչում-հասնում ամենաբարձր սարի գագաթին, բարձր ձայն է հանում և իրեն թափ տալիս, որ հին փետուրները թափվեն: Այդ պահին նա երիտասարդանում է, նրա վրա նոր փետուրներ են աճում, ինքն էլ լցվում է ուժով:

Անմահ Հավքը մեկ այլ գործ էլ ունի. նա հետևում է մարդկանց բարությանը: Դրա համար նա թռչում-ելնում է այնքան բարձր, որ երկիրը ափսեի չափ է երևում, բայց Հավքի սուր աչքից ու ականջից ոչինչ չի վրիպում: Սովորաբար նա իր այդ թռիչքը կատարում է երեկոյան այն պահերին, երբ մարդկանց տներում թոնիր կամ վառարան է վառում, և մարդիկ հավաքվում են դրա շուրջը՝ զրուցելու: Այդ պահին խոսքի մեջ եթե որևէ մարդու անունը տան ու նախանձով կամ չարությամբ մի բան ասեն նրա հասցեին, Հավքը երեք անգամ կանչում է: Նրա կանչը նշանակում է, որ այդ մարդուն մի շատ վատ բան է պատահելու:

Անմահ Հավքը Աստծո հրեշտակն է, որ լուր է տանում Աստծուն յոթերորդ երկինք՝ մարդկանց բարության ու չարության մասին, նաև դրախտ է հասցնում արժանի հոգիներին:

ՇՈՒՇԱՆ ԴԻՑՈՒՀԻՆ ԵՎ ՕՁԵՐԻ ԹԱԳԱՎՈՐԸ

Հսկա, ահռելի է Մասիս սարը: Շատ վաղուց Մասիսի վրա օձեր ու վիշապներ, նաև քաջք-ոգիներ էին ապրում: Իսկ Շուշանը սովորական կամ գուցե ոչ այնքան սովորական մի հովվի աղջիկ էր: Նա չքնաղ, սպիտակամաշկ էր ու նուրբ: Աստղիկի պես նա էլ մեծացել էր բարձր, ձյունապատ լեռներում:





Նրա ծիծաղից սարերի վրա շուշաններ էին բացվում, իսկ երբ նա լալիս էր, նրա արցունքներից քաղցրահամ աղբյուրներ էին գոյանում:

Երբ Շուշանը մեծացավ, գնաց Մասիսից ոչ շատ հեռու մեկ այլ բարձր սարի վրա բնակվելու: Երբ նա ոտք դրեց այնտեղ, սարը պատվեց կանաչով ու շուշաններով: Ամպերից, աստղերի ցոլքերից Արևի ու Լուսնի շողերի օգնությամբ նա մի հրաշակերտ ճերմակ վրան շինեց իր համար և բնակվեց դրանում: Մենակ չմնալու համար Շուշանն իր հետ տարավ սպիտակ օձերին, որոնք նրան ենթարկվում էին որպես ծառաներ, բայց և սիրում էին որպես իրենց թագուհի: Այդ օձերի անունով սարը կոչվեց Օձասար:

Մասիսի վիհի մեջ ապրող օձերի թագավորը, որ ինքը սատանան էր, նախանձեց Շուշանի փառքին ու պատերազմ հայտարարեց նրան: Նրա սև օձերի զորքը հարձակվեց լուսավոր Օձասարի վրա: Սև ու սպիտակ օձերը բախվեցին իրար: Ծանր կռիվ էր:

Ճերմակ օձերը չէին կարող թույլ տալ, որ սատանա-օձը հասնի իրենց թագուհուն ու հերոսի պես պայքարում էին, մինչդեռ Շուշանը հեռացավ սարից ու թաքնվեց Արաքս գետի ջրերում:

Սև օձերն էլ գտնվում էին իրենց թագավորի կախարդական ազդեցության տակ և իրենց կյանքը չէին խնայում, որ գրավեն Շուշան դիցուհու վրանը: Ու շատ օձեր ընկան երկու կողմից՝ դիակներով պատելով լուսավոր Օձասարը, բայց հաղթող չկար հավասար այդ մարտում:

Ինքը՝ օձերի թագավորը, նույնպես կռվի դաշտում էր: Սպիտակ օձերը մահացու վերքեր էին հասցրել նրան: Նա մի կերպ սողալով իրեն նետեց անդունդի մեջ:

Պատերազմն ավարտվեց: Ողջ մնացած օձերը, կորցնելով իրենց առաջնորդներին, քաշվեցին ամեն մեկն իր բույնը, բայց այն կանաչն այլևս չկար. ամբողջ սարը պատված էր օձերի կարմիր արյունով և այդպես կարմիր էլ մնաց դարեր...

Բայց մարդիկ հավատում են, որ մի օր Վիշապասարը նորից կկանաչի: Դրա համար, սակայն, պետք է կատարվեն մի քանի պայմաններ: Նախ՝ մարդիկ որքան էլ երկար ապրեն, նրանց մեղքերը պիտի լինեն կորեկի հատիկի չափ, իսկ ցորենի հատիկը պիտի դառնա փշատի պտղի չափ: Երկրորդ՝ այն մարդիկ, որ չունեն երեխաներ, պիտի օգնեն աղքատներին: Այդ ժամանակ երկնքից կժպտան սրբերը, իսկ չար սատանան կընկնի իր գահից:

Դա ազդանշան կլինի չքնաղ Շուշանի համար, որ ելնի Արաքսի ջրերից ու գնա դժոխք՝ Անդնդային վիշապ-սատանայի մոտ: Սատանան իրականում երկու սիրտ ունի՝ մեկը չար, մյուսը՝ բարի, բայց նրա բարի սիրտը քնած է մինչև Շուշանի գալու պահը: Միայն Շուշանը կարող է գտնել և համբուրել սատանայի բարի սիրտը: Եվ գիտե՞ս, թե ինչ կլինի այդ ժամանակ: Ծծմբե կրակով լի դժոխքը կլցվի Արաքսի սուրբ ջրով ու կվերածվի ծովի, դժոխքի խավարը դուրս կմղվի լույսի ճառագայթներով: Ձուրը կլվա-կտանի չարի բոլոր հետքերը: Եվ ջրերի միջից դուրս կգա հուրի պատանին: Նա իր բոցեղեն շնչով կհալեցնի Վիշապասարի արնոտ ապառաժը, կցողա դրա վրա իր լուսեղեն քրտինքը, և կկանաչի նորից Օձասարը: Պատմում են, որ այդ գեղեցիկ ապագայի մասին են վկայում սարի վրա փշերի միջից դուրս եկող և մինչ այսօր էլ երբեմն ծաղկող շուշանները:

ԱՆՀԻՇԱՏԱԿ ՊԱՌԱՎԸ

Կար-չկար, մի տարեց կին կար: Նա աղքատ էր, ազգականներ, բարեկամներ չուներ: Մարդիկ նրան ասում էին Անհիշատակ պառավ, որովհետև նրանից հետո չէր լինելու մեկը, որ պահպաներ հիշատակը նրա մասին: Այդ բանը շատ էր տխրեցնում խեղճ կնոջը: Մի՞թե նա հեռանալու էր այս աշխարհից անհետք, մոռացվելու էր: Սակայն այդ կինը շատ հմուտ էր իլիկով բրդից թել մանելու, այդ թելով ամեն տեսակի ձեռագործ անելու մեջ:

Նա որոշեց գնալ Երուսաղեմ և Աստծուց հարցնել իր ճակատագրի մասին: Նա յոթ անգամ այցելեց սուրբ վայրերը, աղոթեց, խորհուրդ հարցրեց քահանաներից ու վարդապետներից: Իր աղոթքներն իր հոգու փրկության, երկնային արքայության մեջ տեղ գտնելու մասին չէին: Նա խնդրում էր բացել անհաջողակների, հատկապես ամուսնանալ չկարողացող աղջիկների բախտը: Եվ Աստված նրան տվեց հրաշալի ընդունակություն՝ քանդելու ու բացելու ամեն խճճված բան: Նա այնքան ճանաչված վարպետուհի էր, որ մանում էր ուրիշների համար, և դրա համար նրան վճարում էին: Նա իր աշխատած գումարը հավաքեց և մի մատուռ կառուցել տվեց:

Անցան դարեր, բայց հայ ժողովուրդը չմոռացավ բարի տատիկին: Մարդիկ շնորհակալ էին նրան այն բանի համար, որ երբ բուրդ-կաժ էին մանում և իլիկով թել պատրաստում, երբ թելով գործում կամ կարում էին, և իրենց թելերն իրար էին խառնվում, քարկապ ընկնում, բավական էր ողորմի տային Անհիշատակ պառավին, և թելերը շտկվում էին:

Բայց ծեր կնոջը միայն կարելիս կամ ձեռագործ անելիս չէ, որ հիշում էին: Մեր տատիկներն ու մայրիկները դեռ այսօր էլ հիշում են, որ երբ իրենք փոքր էին, լողանալուց հետո իրենց մազերը սանրում էին իրենց տատիկները: Եվ երբ ծամերը խառնվում էին, իսկ սանրը մազերը քաշում ու ցավեցնում էր, տարեց կանայք անպայման հիշում էին Անհիշատակ պառավին: Անհիշատակ պառավը հրաշքով հարթեցնում էր ընտանեկան ամեն մի վեճ, օգնում էր, երբ հողի հետ կռացած աշխատելուց հետո մեկի մեջքն էր բռնվում, օգնում էր բացել կամակոր, չենթարկվող կողպեքներն ու փականները, անգամ կարող էր այնպես անել, որ չար կախարդի ձեռքով արված կապերն արձակվեն:

ՄԵՂՐԻ ԳՅՈՒՏԸ

Հիշու՞մ եք Արևի ամուսին ու Աստղիկի ու Օիածանի հայր Տիրինկատար լեռը: Այդ լեռան վրա էր ապրում նաև հայոց Տիր աստվածը: Վայրի մեղուները նրա համար սարի ծաղիկներից նեկտար էին հավաքում և մեղր պատրաստում: Այդ մեղրը լցնում էին Տիրինկատարի քարայրերից մեկում դրված տասը կարասների մեջ: Քաղցր ու առատ մեղրը ծորում էր կարասներից դուրս՝ քարերի վրա: Քարերն էլ հին-հին էին, Տիրի տաճարի շինանյութն էին: Ամեն առավոտ Տիրը գալիս-նստում էր իր տաճարի քարերի վրա և ճաշակում արևահամ մեղրը:

Ամեն բան սկսվեց այն օրից, երբ անտառի վայրի մեղուները հանդիպեցին մարդկանց: Չսիրեցին ոսկեգույն թռչող միջատները մեծամիտ, բնությունն ավերող մարդկանց:

Բողոք գնացին կենդանիների ու մարդկանց դատավոր Սողոմոն Իմաստունի մոտ, որ իրենց խորհուրդ տա, թե ինչպես պաշտպանվեն մարդկանցից: Մեղուների թագուհին ասաց.

– Սողոմո՛ն Իմաստուն, մենք կարող ենք ոսկի սարքել, բայց ագահ մարդիկ կգան ոսկու հետևից և կկոտորեն մեզ: Թու՛յլ տուր, որ կծենք նրանց, ու մեր խայթոցից մարդիկ մահանան:

Բայց Սողոմոն Իմաստունն էլ մարդ էր և խղճաց մարդկանց: Նա վճիռ կայացրեց.

– Պետք չէ, որ դուք ոսկի շինեք: Աշխարհում առանց ձեզ էլ ոսկի շատ կա: Ի՞նչ է տալիս ոսկին ձեզ կամ մարդկանց... Միայն վեճ ու կռիվ է գցում, ագահություն ծնում: Ոսկին, որ պիտի Արևի պատկերը լիներ, միայն մարդկանց զարդարվելու ու մի պահ գոհանալու համար է ծառայում: Ավելի լավ է՝ դուք մեղր սարքեք: Դրանով ձեր ձագերին էլ կկերակրեք, մարդկանց էլ, ու մարդիկ միայն կօրհնեն ձեզ: Իսկ մարդկանց դեմ ձեր չարանալու համար ահա իմ արդար վճիռը: Դուք կարող եք խայթել մարդկանց՝ ձեզ պաշտպանելու համար ու ահագին ցավ հասցնել նրանց: Բայց իմացե՛ք՝ ձեզնից ամեն մեկը միայն մեկ անգամ կարող է մարդու խայթել, որովհետև խայթելուց հետո դուք կսատկեք:

Այդպես էլ եղավ: Մարդիկ քիչ էին գործ ունենում մեղուների հետ, որովհետև նրանք կարող էին խայթել: Մեղուներն էլ խուսափում էին մարդկանցից, քանի որ նրանց խայթելով՝ իրենք կարող էին սատկել: Միայն բարի Տիր աստծու համար էին մեղր տանում ու շատ օրհնանքներ լսում նրանից:

Երկար ժամանակ անցավ: Մի օր մարդիկ անտառում որս էին անում: Հանկարծ տեսան, որ մայր արջը իր ձագերի հետ փախչում է անտեսանելի թշնամուց՝ բարձր գոռգոռոց հանելով: Որքան դես ու դեն նայեցին, չտեսան այն գազանին, որ հետապնդում էր արջերին: Հետո որոշեցին հասկանալ, թե այդ ուր է վազում անտառի հզոր գազանը: Մայր արջը վազեց դեպի ձորը՝ իրենից առաջ թողնելով երկու ձագերին: Երբ նրանք հասան ձորի լճակին, մայր արջը ձագերին հերթով ջուրը նետեց և ինքն էլ մտավ ու մեջքի վրա պառկեց ջրի մեջ: Այդ ժամանակ մարդիկ նկատեցին, որ ինչ-որ միջատներ կծում են արջերի՝ ջրից դուրս ցցված մասերը, դրա համար մայր արջը թույլ չի տալիս ձագերին գլուխները ջրից դուրս հանել: Արջերը դադարեցին ձայներ հանել ու կարծես հանգստացան:

Ու էլի մարդիկ չհասկացան, թե այդ ինչն էր արջերին վախեցրել: Նրանք սպասեցին, մինչև արջերը դուրս եկան ջրից, ու հետևեցին նրանց:

Արջերը հասան հաստաբուն մի ծառի, զգուշությամբ մոտեցան ու սկսեցին լիզել ծառի վրայով ծորացող հեղուկը: Երբ նրանք հեռացան, արդեն մութ էր: Մարդիկ կրակ վառեցին, որ տեսնեն, թե որտեղից է ծորում այդ հեղուկը: Բայց երբ ծուխը հասավ ծառի փչակին, այդտեղից խմբերով դուրս թռան հազարավոր մեղուներ: Իսկ երբ մարդիկ կտրեցին ծառը և ուսումնասիրեցին փչակը, գտան այդ հեղուկը և փորձեցին ուտել: Այնքա՜ն քաղցր, այնքա՜ն համեղ էր, որ որոշեցին ուրիշ ծառերի փչակներում էլ որոնել: Եվ ամեն տեղ մեղուներ կային, որոնք հարձակվում էին իրենց վրա ու խայթում, բայց հետո՝ անշնչացած թափվում էին: Այդպես մարդիկ հասկացան, որ մեղուներն են պատրաստում երկնային մանանայի պես քաղցր մեղրը: Նրանք գյուղից հատուկ փակ զամբյուղներ բերեցին ու իրենց հայրենակիցների համար տարան այդ մեղրից: Մի քանի խելոք մարդիկ էլ նկատեցին, որ որոշ մեղուներ մնացել են զամբյուղների մեջ: Նրանք չբացեցին զամբյուղները, այլ անցք կտրեցին դրանց վրա, որ մեղուներն ազատ թռչեն ու վերադառնան: Այդպես է առաջացել առաջին մեղվի փեթակը:

Փեթակի մեջ մնացած մեղուները սերունդ տվեցին ու դարձան ընտանի մեղուներ: Նրանք մեղր էին պատրաստում, մարդիկ ուտում էին այդ մեղրը և երգում.

«Օրհնա՛ծ մեղու, պզզա՛ն մեղու,
Քո մանրիկ թևեր վերցրու՛,
Բարձրիկ սարերն ես գնալու,
Շուշան, սմբուլ ես քաղելու,
Քաղցրիկ մեղրն ես կրելու»:

Այդպես կատարվեց Սողոմոն Իմաստունի ասածը՝ մեղուն մեղր պատրաստեց, մարդն էլ կերավ ու օրհնեց:

ՆԵՄՐՈՒԹ ԹԱԳԱՎՈՐԸ

Նեմրութ անունով մի թագավոր կար. այնքա՜ն մեծամիտ, որ ինքն իրեն Աստված էր կարծում: Ասում էր.

– Այս սարերն ու բլուրները ես եմ ստեղծել, կենդանիներին ու թռչուններին ես եմ ստեղծել, Աստված ո՞վ է որ:

Բայց հավատավոր մարդիկ նրա ասածները լուրջ չէին ընդունում, միևնույն է, իրենց Աստծուն էին պաշտում, նրան էին աղոթում, իրենց խնդիրներով ու ցավերով նրան էին դիմում:

Մեծամիտ Նեմրութն էլ որոշեց մի այնպիսի բերդ շինել բարձր աշտարակներով, որ մինչև երկինքը հասնի, և եթե բոլորի սիրած Աստվածն այնտեղ է ապրում, ապա բարձրանա ամենաբարձր աշտարակի վրա ու իր հզոր նետերով սպանի Աստծուն:

Հարուստ էր Նեմրութ թագավորը, հետն էլ հայտնի նետաձիգ էր. նետուաղեղն օգտագործելու մեջ ոչ ոք նրա հետ չէր կարող մրցել: Բայց մի բան հաշվի չէր առել նա՝ որ Աստված անմահ է, նրան ո՛չ նետով, ո՛չ այլ զենքով սպանել չի ստացվի:

Բայց մեծամիտ ու գոռոզ արքան հայտարարեց ամբողջ իր թագավորության վարպետներին, որ վերցնեն իրենց գործիքները և գան իր ասած տեղը՝ բերդ շինելու: Հավաքվեցին շինարարները, վարպետները Նեմրութի մոտ ու ասացին.

– Մե՛ր տիրակալ, պատրաստ ենք քո հրամանով գործը սկսել, միայն ասա՛ մեզ, թե ինչ է քեզ պետք:

Նեմրութն ասաց.

– Այնպիսի բարձր բերդ պիտի կառուցեք, որ աշտարակները դեմ առնեն երկնքին, որ ես բարձրանամ բերդի գլուխը ու տեսնեմ բոլորի սիրած անտեսանելի Աստծուն: Կրակելու եմ ու սպանեմ, ցած գցեմ դրան:

Դժվար էր առաջադրանքը, բայց վարպետներն առանց հարցեր տալու գործի անցան: Բարձեցին ուղտերին, գնացին ծովի միջից ավազ բերելու, հեռու լեռներից՝ քար կրելու: Նեմրութի շինարարների քարավանը երկար էր, բեռը՝ ծանր ու շատ: Քարտաշներն իրենց գործն էին անում, ավազ մաղողներն ու շաղախ պատրաստողներն՝ իրենցը: Հյուսները փայտից սյուներ էին տաշում, պատշարները շարում էին, չափողները չափում էին, իսկ շինանյութը ուղտերին բարձած՝ գալիս էր ու գալիս: Քանի շինում էին, աշխարհով մեկ տարածվում էր լուրը, թե Նեմրութ թագավորը բերդ է կառուցում, որ ելնի ու սպանի երկնքի Աստծուն: Քանի շինեցին, այնքան ավելի հպարտացավ Նեմրութն ու էլի էր ասում.

– Ես ամենքի աստվածն եմ:

Իսկ Աստված երկնքում մտածեց, որ Նեմրութն էլ իր ստեղծածն է, թեկուզ գոռոզ ու ինքնասեր: Բայց երկու բան Նեմրութի մեջ հաճելի էր Աստծուն. նախ՝ Նեմրութի հացի գնդերը մեծ էին, նա հյուրասեր էր, հաց էր տալիս ամեն կարիքավորին, երկրորդ՝ Նեմրութի տան դարպասի մուտքը ցածր էր, նրա նախնիներն այնպես էին արել, որ ամեն անգամ շեմից դուրս գալիս ու ներս մտնելիս՝ խոնարհվեին Աստծո առաջ:

Բերդը բարձրացավ այնքան, որ ծայրը երկրից չէր երևում: Այդ ժամանակ Աստված որոշեց, որ այդպես շարունակվել չի կարող: Նա կանչեց մրջյուններին և ուղարկեց բերդի հիմքերի մոտ:

Մրջյունները մտան հիմքերը և սկսեցին փորել և ուտել շաղախը: Մինչդեռ վերևում վարպետները շինում էին, մրջյունները ներքևից ուտում էին: Կերան-կերան ու այնքան չաղացան, որ դարձան կատուների չափ:

Այդ ընթացքում Ներմրութը գնում էր որսի իր որդի Հազրոյի հետ: Հազրոն իր ձիով հետապնդեց մի եղնիկի ու հասավ ժայռի ծայրին: Եղնիկը թռավ-փախավ, իսկ Հազրոն իր ձիով ընկավ ձորը և խրվեց խոր ձյան մեջ՝ երկու մեծ քարերի արանքում: Ծառաները եկան-հասան ու դժվարությամբ դուրս հանեցին արքայազնին ու նրա ձիուն: Բայց երբ դուրս քաշեցին, ձյան շերտը հետ գնաց, ու բոլորը տեսան, որ այդ քարերի արանքում՝ ձյան տակ, աճում էր խաղողի մի որթ, վրան էլ՝ մի ճութ խաղող:

Ցնցվեց, հիացավ Հազրոն ու ասաց.

– Էլ չեմ հավատում Նեմրութ աստծուն: Հավատում եմ այն Աստծուն, որ այս հրաշքն է կատարել՝ ձյան տակ, քարերի արանքում խաղող է ստեղծել:

Լսեց Նեմրութը որդու խոսքերը, մոլեգնեց այն մտքից, որ իր որդին ոչ թե իրեն՝ Նեմրութ-աստծուն է պաշտում, այլ իր թշնամուն՝ անտեսանելի երկնային Աստծուն:

Հրամայեց զինվորներին բռնել ու սպանել Հազրոյին: Հազրոն հեծավ իր ձին ու փախավ: Նեմրութի զինվորները երկար հետապնդեցին Հազրոյին, և երբ արքայազնը հասավ Մշո մի քարանձավի, հասան ու սպանեցին նրան:

Ահա այդ ժամանակ վրդովվեց, ցավ ապրեց երկնային Աստվածը, չհաշտվեց այն մտքի հետ, որ Նեմրութն իրեն տհաճ թվացած ընդամենը մի խոսքի համար անմեղ, այդքան երիտասարդ, իր հարազատ որդուն այդպես պատժեց: Ու այս դաժան արարքի համեմատ՝ այլևս նշանակություն չունեին ո՛չ Նեմրութի հացի գնդերը, ո՛չ էլ նրա մուտքի ցածրությունը: Հանցագործ ու արնադավ, որդիասպան էր Նեմրութն Աստծո աչքերում: Իսկ Հազրոյի մահվան վայրում նա վառ լույսի կամար կապեց, որից սարսափեցին ու զարմացան բոլոր տեսնողները:

Նեմրութն էլ դեռ իր կատաղության մեջ՝ առավ իր նետերն ու աղեղը ու ելավ բերդի վրա: Նա լարեց իր աղեղը ու նետեր արձակեց դեպի վեր՝ դեպի երկինք: Աստված ծովից մի հսկա ձուկ հանեց ու պահեց Նեմրութի նետերի առաջ: Ձուկը լաց եղավ ու աղաղակեց.

– Տե՛ր իմ, ի՞նչ էի արել, որ ինձ այդ անարժանի նետերի տակ դրեցիր:

– Մի՛ մտածիր,– ասաց Աստված,– քո թափածն արդար արյուն է, պարգև կտամ քեզ փոխարենը:

Դիպան նետերը հսկա ձկանը, երկնքից արյուն հոսեց, Նեմրութի նետերը հետ եկան, և արքան արյան հետքեր տեսավ դրանց վրա:

– Ըհը՛,– ուրախացավ նա,– սպանեցի ես դրան, թափեցի արյունը:

Այդ ասելուն պես՝ կատվի չափ մրջյուններն ավարտեցին իրենց կործանարար գործը, կտրեցին բերդի հիմքը, և բերդը ահավոր թնդյունով փլվեց, քանդվեց, հազար փշուր եղավ, քարերը թռան հեռու-հեռավոր տեղեր, իսկ փլատակը վերածվեց միայնակ սարի: Քարավանները, որ դեռ շինանյութ էին բերում, նույն պահին քար դարձան իրենց բեռներով ու ուղտերով: Երկնքից կայծակներ թափվեցին, իսկ այն տեղում, որտեղ Նեմրութն էր կանգնած, ամենաբարձր աշտարակի տեղում, երկրի տակից ջուր դուրս եկավ ու ծածկեց նոր սարի ամբողջ գագաթը: Չար Նեմրութն այդպես մնաց սարի մեջ թաղված՝ լճի ջրերի տակ: Լեռան անունն էլ մնաց Նեմրութ:

ՇԻՐԻՆ ԵՎ ԱԶՆԱՎՈՒՐ

Շատ հին ժամանակներում երկրի վրա ապրում էին ոչ թե մեզ պես մարդիկ, այլ հսկաներ: Մարդիկ նրանց կոչում էին մե՛կ Ազնավուր, մե՛կ Ֆահրադ կամ Ֆերեզ, մե՛կ Օհուզ կամ Օղուզ: Նրանցից էին Սասնա ծռերը, քաջ Ռուստամը և Զոհրաբը, Բոլն ու Հռուշանը: Նրանց մասին բազմաթիվ պատմություններ են հիշել մեր նախնիները, որ հասցրել են տեսնել վերջին հսկաներին:

Ամենից հաճախ պատմում էին այն մասին, թե ինչպես էին միայնակ հսկաները գողանում աղջիկներին, և նրանց հետ ամուսնանալու անհույս փորձեր անում:

Տխուր մի պատմություն կար, որ պատմում էին Շիրին անունով աղջկա և Ազնավուրի մասին:

Մանազկերտում հարուստ, բայց միայնակ ապրում էր Ազնավուրը: Մի օր տեսավ հուրի աղջկան ու սիրեց նրան: Բայց ո՞վ իր գեղեցկուհի աղջկան հոժար կամքով կնության կտար ահռելի Ազնավուրին: Սա էլ այդպես մտածեց ու փախցրեց գեղեցկուհուն: Շիրինը չէր ընդունում նրան և առանց թաքցնելու ցույց էր տալիս, որ Ազնավուրը տեղ չունի իր սրտում: Հսկային էլ թվում էր, որ կարող է ինչ-որ ձևով շահել նրա սիրտը: Նա մի պալատ է կառուցում, որի պատուհանները բացվում են դեպի գեղատեսիլ Արածանի գետն ու ծաղկավետ դաշտերը, և նվիրում է աղջկան:

Աղջիկը, պալատում ապրելով, բողոքում է, որ այգի ու բոստան չունի, և Ազնավուրն անմիջապես հեռացնում է հսկա ժայռերն ու քարերը, փորում է հողը, այգի է տնկում, նույնիսկ Շիրինի համար աճեցնում է խիյար, որին մենք այսօր վարունգ ենք ասում: Խիյարը, որ կախարդական էր ու պետք է հալեցներ աղջկա քար սիրտը, օգուտ չի տալիս:

Ընդհակառակը՝ Շիրինն իր պատուհանից տեսնում է գեղեցիկ մի երիտասարդի և իր սերը նրան է տալիս: Բայց Ազնավուրին էլ խաբում է, թե արդեն պատրաստ է ամուսնանալ նրա հետ և ուղարկում է նրան լեռնային դևերից հարիսա բերելու, որ վարունգի հետ դնեն հարսանեկան սեղանին: Որպես հարսանեկան նվեր էլ Ազնավուրից խնդրում է սարքել ոսկե մուկ ու կատու, աքաղաղ ու աղվես, նապաստակ ու որսորդ, բայց կախարդական, այնպես, որ կենդանի լինեն ու միշտ վազեն իրար հետևից, բայց իրար չհասնեն: Ազնավուրն իսկույն գնում է Շիրինի պատվերները կատարելու և բաց է թողնում պալատի դուռը:

Հենց այդ էլ պետք էր Շիրինին և իր հավանած երիտասարդին. նրանք պայմանավորվում և փախչում են իրար հետ: Իսկ երբ Ազնավուրը վերադառնում է ու տեսնում, որ իրեն խաբել են, հուսահատվում ու անհուն միայնակ ու լքված է զգում իրեն: Գնում է իր տնկած այգին, վերցնում հսկայական բահը և դրանով սպանում է ինքն իրեն: Հարևանությամբ ապրող մարդիկ շատ են խղճում սիրահարված հսկային, երգ են հորինում նրա դժբախտ սիրո մասին, իսկ երիտասարդ տղամարդիկ թաղում են նրան ու հսկայական մի քար դնում նրա վրա:

ԱՆԱՀԻՏ

Հին ժամանակներում, երբ Հայաստանը շատ մեծ էր, երկրի տարբեր մասերում մարդիկ աղոթում էին Անահիտ աստվածուհուն:

Նրան էր պատկանում Մնձուր լեռը, որին ասում էին նաև Նահատա աթոռ: Մնձուր լեռան վրա կան հազարավոր աղբյուրներ, որոնց ջրերը համարվում են մայր Անահիտի կրծքի կաթը: Դիցուհին կանգնում է Մնձուր լեռան յոթ գագաթներից ամենաբարձրին, իսկ նրա աջ կրծքից հոսող կաթը հոսում է ցած, դառնում է Եփրատ գետը և գնում է հեռու՝ դեպի հարավ: Իսկ ձախ կրծքի կաթը հոսում և դառնում է Մեղրագետը: Այդ երկու գետերը սրբազան են հայոց համար:

Մի տեղ կա, ուր գետերի ջրերն իրար են բախվում ու շատրվան դառնում: Բախման վայրում մի բարձր ժայռ կա, որ միշտ մշուշի մեջ է երևում շատրվանի կաթիլներից: Այդ ժայռի վրա Վարդավառ տոնի առավոտյան հաճախ են տեսել մայր Անահիտին՝ բարձր ու լայն ճակատով, նշաձև գեղեցիկ աչքերով և երկար թարթիչներով, երկար մազերով, որոնք նա սանրում էր իր նուրբ մատներով: Նրա մարմինը գոտկատեղից վերև մարդկային էր, իսկ գոտկատեղից ներքև՝ ձկան: Լոգանքն ընդունելուց հետո նա նորից բարձրանում էր Մնձուր լեռը և այնտեղից դիտում, թե ինչպես են մարդիկ տոնում իր տոնը:

Անահիտի սպասուհիները փերիներ էին, որ կարապների կերպարանք ունեին: Մնձուր լեռից ոչ հեռու գտնվում էր Կարապի լիճը, որտեղ Վարդավառին հավաքվում էին Անահիտի կարապները: Այդ օրը ամեն մայր աշխատում էր իր երեխային լողացնել լճի ջրերում, որ երեխան առողջ ու երջանիկ լինի: Անահիտը երբեմն հայտնվում էր մարդկային կերպարանքով: Նա Առան հովվի աղջիկն էր, իսկ Առանը Արցախի հին անունն է: Արցախում կային Անահտասար, Անահտաձոր, Անահիտի մի քանի աղբյուրներ:

Ահա այդպիսի մի աղբյուրի մասին հին մի պատմություն կա:

Առանի Պարտավ մայրաքաղաքում էր ապրում Վաչե թագավորը, որն ուներ միանուճար մի որդի՝ Վաչագան անունով: Մի անգամ Վաչագանն իր ընկերոջ՝ Վաղինակի հետ որսի է գնում: Այդ օրը շատ շոգ է լինում, և ընկերները հոգնում ու շատ ծարավում են: Հասնում են Հացի գյուղը ու նստում են աղբյուրի մոտ՝ հանգստանալու: Աղբյուրի մոտ երիտասարդ աղջիկներ կային, որ եկել էին կժերով ջուր տանելու: Տղաները ջուր են խնդրում նրանցից: Բայց մի աղջիկ թափում է կուժի ջուրը, նորից լցնում, նորից թափում ու հետո միայն լցնում ջուրն ու տալիս Վաչագանին: Ծարավը հագեցնելուց հետո Վաչագանն ուշադիր նայում է աղջկան, տեսնում է լայն ու բարձր ճակատ, նշաձև աչքեր ու երկար արտևանունքներ, հյուսված երկար մազեր: Անահիտն էր դա՝ հովիվ Առանի աղջիկը: Եվ երբ արքայազնը հարցնում է, թե ինչու աղջիկը միանգամից ջուրը չտվեց նրան, Անահիտն ասում է, որ ջուրը սառնորակ է, պետք էր որսորդների քրտնածությունն անցներ, նոր խմեին, այլապես կհիվանդանային:

Սիրահարվում է արքայազնը խելացի գեղեցկուհուն և համոզում արքային, որ գնա ու խնդրի նրա ձեռքը: Երբ արքան իր որդու հետ գնում են հովիվ Առանի տուն, սա տուն է հրավիրում ու գեղեցիկ գորգ գցում նրանց ոտքերի տակ: Թագավորը, շատ զարմացած, ասում է.

– Առա՛ն, դու պարզ հովիվ ես, որտեղի՞ց քեզ այս թանկարժեք գորգը:

– Իմ աղջիկն է գործել,– հպարտությամբ պատասխանում է Առանը:

Հետո կանչում են գեղեցկուհի Անահիտին, որ ասի՝ համաձայն է նա արդյոք ամուսնանալ Վաչագանի հետ:

Իսկ աղջիկը հարցնում է՝ գիտի արդյոք Վաչագանը որևէ արհեստ: Երբ իմանում է, որ արքայազն է ու ոչինչ անել չգիտի, պահանջում է, որ որևէ արհեստ սովորի, և միայն այդ ժամանակ ինքը կտա իր համաձայնությունը:

Վաչագանը սովորում է մետաքսե կտավի վրա ոսկե թելով գործել, մի շքեղ սփռոց գործում և ուղարկում Անահիտին նվեր: Այդ ժամանակ յոթ օր յոթ գիշեր հարսանիք են անում և ամուսնացնում Վաչագանին ու Անահիտին:

Անցնում են տարիներ: Վաչե արքան մահանում է և իր գահը զիջում Վաչագանին: Վաչագանը մեր առաջին քրիստոնյա թագավորներից էր, սուրբ Մեսրոպ Մաշտոցի աշակերտը: Նա լավ թագավորում է երկրում, օրենքներ գրում, եկեղեցիներ շինում: Վաչագանն ու Անահիտը ունենում են երկու որդի:

Մի անգամ Վաչագանը Վաղինակի հետ մեկնում է իր երկրի բնակիչների վիճակը տեսնելու: Շատ տեղեր է լինում, մինչև հասնում է մի վանքի նման տեղ: Ոչ ոք չգիտեր, որ նա թագավոր է: Նրան բռնում են ու բանտի նման մի տեղ տանում: Դա կռապաշտների տաճար էր:

Այդտեղ մարդկանց ստրուկի պես աշխատեցնում էին, իսկ երբ նրանք հոգնում կամ հիվանդանում էին, նրանց սպանում, զոհաբերում էին իրենց աստվածներին:

Վաղինակը մի միտք է տալիս արքային. ասել կռապաշտների գլխավորին այն մասին, որ ինքը լավ ոսկեթել մետաքսե սփռոցներ գործել գիտի:

Կռապաշտների գլխավորն ուրախանում է և հրամայում, որ Վաչագանը սփռոց գործի, իսկ ինքը կփորձի այն վաճառել: Վաչագանն էլ գործում է սփռոցը, վրան Մաշտոցի տառերով գրում, թե որտեղ է ինքը, և առաջարկում, որ գլխավորը հենց թագուհուն վաճառի սփռոցը: Բերում են սփռոցը թագուհու պալատ, իսկ Անահիտի ու Վաչագանի ավագ որդին անմիջապես նկատում է, որ դրա վրա գիր կա: Կարդում են գիրը, իմանում՝ որտեղ և ինչ վիճակում է Վաչագանը: Շատ է զայրանում թագուհին: Վերցնում է իր զորքը և գնում դեպի այն վայրը, ուր պահում էին ամուսնուն: Ինքն իր թրով ջարդում է դարպասը և մտնում կռապաշտների մոտ: Սրանք անմիջապես ճանաչում են իրենց աստվածուհուն և ծնկի իջնում նրա առջև:

Բայց Անահիտն անգութ էր: Նա սրի է քաշում անիրավներին և ազատում Վաչագանին, Վաղինակին և բոլոր բանտարկյալներին:

Անահիտ աստվածուհին ունի նաև երկու աղջիկ: Նրանցից մեկի անունը Արաքս է, մյուսինը՝ Նանե: Անահիտն իր աղջիկներից մեկին հրամայել է դառնալ Արաքս գետը, մյուսին՝ հաց և որպես սնունդ ծառայել մարդկանց համար: Այդ օրվանից հացը սուրբ է, նրան դեռ այսօր էլ «նան», այսինքն, մեծ մայր, տատիկ են ասում: Սուրբ է հայերի համար նաև հզոր ու ջրաշատ Արաքսը:

ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍՆ ՈՒ ՔԱՐԻՑ ԾՆՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Հին, անհիշելի ժամանակ քարերը խոսել գիտեին: Նրանք շփվում էին իրար և մարդկանց հետ, պատմում էին իրենց գաղտնիքները, ցույց էին տալիս ոսկու և այլ օգտակար հանածոների տեղերը: Խոսում էին մեծ ժայռերը և թանկարժեք փոքրիկ քարերը, քարերն օգնում էին մարդկանց բուժվել հիվանդություններից ու երեխաներ ունենալ: Երջանիկ, անհոգ ժամանակներ էին, խաղաղ և ուրախ: Այդ խաղաղությունը դուր չեկավ սատանային, և նա որոշեց կռիվ ու գժտություն գցել մարդկանց ու քարերի միջև: Նա գնաց Աստծո մոտ՝ բողոքելու.

– Ա՛յ երկնային տիրակալ, որ քեզ արդար ես համարում, դու բոլորին՝ բույսին ու կենդանուն, մարդուն ու նույնիսկ քարերին տալիս ես այն, ինչ իրենց պետք է, միայն ինձ ես մոռացել, իմ մի փոքրիկ խնդրանքն էլ չես կատարում:

– Ի՞նչ ասեմ,– գլուխը շարժեց Աստված,– ախր քեզ լավ եմ ճանաչում, քո ուզածը հաստատ մնացած բոլորի համար վնաս է լինելու: Բայց ասա՛, կկատարեմ քո մի ցանկությունը, որ չասես, թե արդար չեմ ու բոլորին հավասար չեմ վերաբերվում: Դե գնա՛ ու ստեղծի՛ր այն, ինչից բավարարված կզգաս, թույլ եմ տալիս:

Խորամանկ սատանան ուրախացավ: Գնաց քարերի մոտ ու պահանջեց, որ սրանք իրենց համար թագավոր ընտրեն: Մինչ այդ քարերը հավասար էին, ոչ ոք չէր մտածել թե իրենցից որն է ամենից արժանավորը: Մտածեցին-մտածեցին ու որոշեցին թագավոր դնել Ոսկեքարին:

– Դմբոնե՛ր,– ծիծաղեց սատանան,– ձեզ Ոսկեքարի փայլուն արտաքի՞նը խաբեց: Եկե՛ք, ես ձեզ ցույց տամ, որ ձեզնից ամենաուժեղը Կայծքարն է:

Նա կանչեց Կայծքարին և Երկաթքարին, մի դեզ ծղոտ ժողովեց ու խնդրեց, որ Կայծքարն ու Երկաթքարը հեռվից վազեն իրար վրա ու ուժգին խփվեն իրար: Միամիտ քարերն այդպես էլ արեցին: Իսկ երբ բախվեցին, Կայծքարից կայծեր թռան, ընկան ծղոտի դեզի վրա, ու մի մեծ խարույկ առաջացավ:

Մարդիկ ու կենդանիները, որ երբեք կրակ չէին տեսել, մոտ վազեցին: Բայց կրակը տեղափոխվեց ուրիշ բույսերի, հետո էլ կենդանիների ու մարդկանց վրա, և հրդեհ եղավ:

Կրակը սկսեց ամեն ինչ լափել: Մարդիկ տեսան, որ կրակով եփվեցին իրենց կերակուրները, բայց հետո այրվեցին ու մոխիր դարձան: Վառվեցին տները, անտառները, բույսերն ու կենդանիները սկսեցին զոհվել այդ ահեղ հրդեհում:

– Այդ ի՞նչ արեցիր,– որոտաց Աստված ու մի կայծակ նետեց փախչող սատանայի հետևից:

Այդպես առաջացավ կրակը. մարդիկ սովորեցին կայծքարով կրակ ստանալ, բայց և իմացան, թե ինչքան վտանգավոր է այն: Այդպես առաջացավ նաև կայծակը, որը մինչև այսօր Աստված ուղարկում է՝ սատանային պատժելու համար, բայց մարդիկ էլ կարող են պատահաբար դրա զոհը դառնալ: Դրա համար է, որ մինչև մեր օրերը, երբ կայծակ է լինում, մարդիկ խաչակնքում են, որ Աստված խնայի իրենց և միայն սատանային խփի:

Իսկ քանի որ այդ մեծ դժբախտության, աշխարհի կեսն ավերած հրդեհի համար պատասխանատու էին քարերը, Աստված նրանց էլ պատժեց, զրկեց նրանց խոսելու շնորհից:

Եվ լռեցին քարերը: Դարեր ու հազարամյակներ լռեցին: Լռեցին, երբ իրենց ցավ էին պատճառում, լռեցին, երբ ուրախ էին, լռեցին, երբ իրենց պես քար էին դառնում վիշապներն ու չարակամները, Աստծուն դեմ գնացողները, աղքատներին ու որբերին վիրավորողները: Լինում էր, որ լաց էին լինում, երբ մի անմեղ սրբի էին սպանում և թաղում իրենց տակ, հաճախ էլ յուղ էին տալիս այն եկեղեցիներին, որոնք կառուցում էին իրենցով: Եվ միայն մեկ անգամ երգեցին ուրախությունից, և նրանցից մի կենդանի մարդ՝ լուսեղեն մանուկ ծնվեց:

Այդ օրը Ծաղկազարդ էր: Քրիստոսն այդ օրը Երուսաղեմ էր մտնում էշի վրա նստած: Երեխաները բարձրանում էին ծառերին, որ տեսնեն նրան, հարուստ կանայք դուրս էին գալիս իրենց պատշգամբները, որ տեսնեն, ինչպիսին է նա՝ անհույս հիվանդներին բուժող և նույնիսկ մահացածներին կենդանացնող այդ հրաշք-աստվածամարդը:



Ամբողջ քաղաքն էր հավաքվել քաղաքի այն դարպասների մոտ, որտեղից գալիս էր Քրիստոսը: Քրիստոսի ոտքերի տակ իրենց հագուստն էին փռում, որ դիպչի ու իր հրաշքից բաժին տա, նրան դիմավորում էին ծաղկած ձիթենիների և ուռենիների ճյուղերով: Կանայք՝ իրենց մանուկները գրկներին, տղամարդիկ՝ վարդ ու ռեհան ձեռքներին, դիմավորում էին Նրան: Քրիստոսին ընդառաջ գնացին բոլորը՝ բացի չամուսնացած աղջիկներից, նորահարսներից և երեխա չունեցողներից: Ինչ-որ մեկն ասել էր, որ նրանք իրավունք չունեն մոտենալ Հիսուսին:

Քրիստոսն ինքը պահանջեց, որ իրեն մոտենան կանայք իրենց երեխաների հետ, որովհետև Աստված շատ է սիրում փոքրիկներին, նրանց անմեղ խոսքը համարում է սուրբ և արդար: Անզավակ երիտասարդ մի կին նորածնի չափ մի քար վերցրեց, բարուրեց երեխայի պես և միացավ մյուսներին: Իսկ ժողովուրդը երգում և աղաղակում էր՝ օվսա՜ննա, օվսա՜ննա, այսինքն՝ փառք, փառք:



Հիսուսն ասաց. «Երբ նրանք լռեն, քարերը կաղաղակեն»: Այդ պահին նրան հասավ քարը բարուրող կինը: Բոլորի աչքի առաջ նրա գրկի քարը նույնպես սկսեց երգել: Հիսուսը, որ ամեն բան գիտեր, ձեռքը դրեց քարի վրա և ասաց. «Սանդաքա՛ր, լռի՛ր, լռի՛ր, ձա՛յն հանիր»: Եվ նույն րոպեին քարը երեխա դարձավ և ինքն էլ կանչեց՝ օվսա՜ննա:

Հիսուսի կողքին կանգնած էր սուրբ Թադեոս առաքյալը: Քրիստոսը դիմեց նրան, որ դառնա քարից երեխա դարձածի կնքահայրը.

– Այս մանուկը,– ասաց նա,– թո՛ղ առաջինը մկրտվի քո ձեռքով այն ժողովրդից, որին դու շուտով մկրտելու ես: Դա հայ ժողովուրդն է լինելու: Թո՛ղ որ բոլոր հայերը լինեն այս մանուկի նման՝ քարի պես ամուր իրենց հավատքի մեջ: Այնքան ամուր, որ նրանց ոչ մի դժբախտություն, ոչ մի դժվարություն չկոտրի: Երեխայի անունն էլ կդնեք Ստեփանոս, որ նշանակում է Պսակ: Նա քարից է ծնվել, քարով էլ սպանվելու է, պսակվելու է նահատակությամբ և ինձ մոտ է գալու: Նա լինելու է առաջին քրիստոնյայի օրինակը, և նրա ժողովուրդը՝ հայերը՝ առաջին քրիստոնյաները աշխարհում:

Մեծանալով՝ երեխան դառնում է սուրբ Ստեփանոսը և մեռնում է քարից այնպես, ինչպես քարից ծնվել էր: Այդ հեթանոսներն են քարկոծում նրան՝ հավատալով չար մարդկանց բամբասանքին, թե իբր նա Աստծո հասցեին վատ բաներ է ասել: Բայց քար-Ստեփանոսը ժպտալով է գնում դեպի երկնքում իրեն սպասող Քրիստոսին: Եվ նրան ասում են Սուրբ Ստեփանոս Նախավկա՝ առաջին նահատակ:

Ահա թե ինչու հայ ժողովուրդը դիմացկուն և ամուր է քարի պես, և ոչինչ աշխարհում չի կարող կոտրել հայերի կամքն ու ապրելու հզոր ոգին:

Բարի խոսք բոլորին, ում շնորհիվ այս գիրքը ստեղծվեց

Այս գիրքը՝ **«Քարից ծնված ժողովուրդը»**, սկիզբ առավ մի խումբ մարդկանց հավատից՝ մեր արմատներին, ժառանգությանը և տոկուն ոգուն: Այն մի փոքրիկ ճամփորդություն է դեպի մեր արմատներն ու ինքնությունը. պատմություններ, որոնք գալիս են հեռվից, բայց շարունակում են խոսել մեզ հետ՝ պատմելով, թե ով ենք, որտեղից ենք և ինչ ուժ է թաքնված մեր նախնիների խոսքերի մեջ:

«ԿԱՋԱ»-ի անունից ի սրտե շնորհակալ եմ բոլոր նրանց, ովքեր իրենց սրտով ու հոգով մասնակցեցին այս գրքի ստեղծմանը:

Հատուկ շնորհակալություն ժողովածուի կազմող Լիլիթ Սիմոնյանին՝ հայկական առասպելները ջանասիրաբար ու պարզորեն մեզ վերադարձնելու համար, ինչպես նաև՝ նկարազարդող Լուսինե Թամազյանին՝ հայկական աշխարհի ձայներն անցյալից երեխաների աչքերի առաջ պատկերավոր կենդանացնելու համար:

Շնորհակալություն գրքի խմբագիր Աստղիկ Բալայանին և սրբագիր Աննա Չոփուրյանին՝ գրքի լեզվի հնչեղության և հստակության համար:

Անչափ շնորհակալություն մեր թիմակիցներին՝ Զարուհի Լավչյանին, Անի Ղազարյանին, Միլենա Ավետիսյանին, ովքեր մեծ նվիրումով ներգրավված են եղել գրքի մշակման բոլոր փուլերում՝ օգնելով, որ այն լինի ոչ միայն հետաքրքիր երեխաների համար, այլ նաև օգտակար՝ ծնողներին ու ուսուցիչներին՝ երեխաների հետ մեր արմատների մասին զրույցի համար:

Մեզ համար հատկապես թանկ է մեր փոքրիկ խորհրդատուների մասնակցությունը. նրանք առաջիններից էին, ովքեր կարդացին գրքի նախնական տարբերակը և իրենց հարցերով, խորհուրդներով օգնեցին այն դարձնել առավել հասկանալի իրենց հասակակիցների համար:

Առանձնահատուկ շնորհակալություն Œuvre d’Orient կազմակերպությանը, որը հավատաց այս գաղափարին դեռ նրա ծնվելուց առաջ և սիրով աջակցեց **«Սերունդներ կամրջող»** ծրագրի և այս գրքի կյանքի կոչմանը: Շնորհակալություն նաև ֆրանսիական ASFAR կազմակերպությանը՝ գրքի տպագրության հարցում մեզ աջակցելու համար:

Սիրելի՛ փոքրիկ ընթերցող,

անչափ շնորհակալություն նաև քեզ, որ որոշեցիր մեզ հետ անցնելու այս փոքրիկ ճամփորդությունը: Այս պատմություններն ընթերցելիս հիշիր, որ դու մի ժողովրդի զավակ ես, որը քարից հաց է քամել, վշտից երգ ստեղծել: Դու այն ժայռի մի մասնիկն ես, որը փորձում են կոտրել, բայց երբեք չեն կարող ճեղքել, եթե չմոռանաս, թե ով ես ու որտեղից ես գալիս: Վստահ եղիր՝ քո արմատները քո հողում են, քո հիշողության ու վառ երևակայության մեջ: Դրանցով է, որ կառուցելու ես քո ապագան՝ ավելի ուժեղ ու տոկուն:

Սիրով՝
Մոնիկա Սարգսյան
«ԿԱՋԱ» հիմնադրամի տնօրեն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արևն ու Լուսինը 5
Աստղիկ 9
Անմահ Հավքը 13
Ծուշան դիցուհին և օձերի թագավորը 17
Անհիշատակ պառավը 21
Մեղրի գյուտը 24
Նեմրութ թագավորը 28
Շիրին և Ազնավուր 33
Անահիտ 36
Սուրբ Ստեփանոսն ու քարից ծնված ժողովուրդը 41

ՔԱՐԻՑ ԾՆՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Տպագրությունը՝ թվային:
Չափսը՝ 60x84/16:
Ծավալը՝ 6.0 տ/մ:
Թուղթը՝ օֆսեթ 100 գ/մ^2:
Տպաքանակը՝ 80:
Տպագրված է «ՄԵՅԴ ՓՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ
տպարանում:

Գիրքը մշակվել և տպագրվել է «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի և Œuvre d'Orient կազմակերպության համագործակցությամբ իրականացվող «Սերունդներ կամրջող. մշակութային ժառանգության պահպանում և դիմակայունության ամրապնդում» ծրագրի շրջանակներում: Գրքի տպագրությանն աջակցել է ASFAR կազմակերպությունը:

ISBN 978-9939-1-2106-2